



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առևտ նյութը առեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1810

Եւ ՇԼԻՄԿԱՎՀԵՑԿԻ

ԿԱՊԻՏԱՆՈՒԹԵՐԸ
ՆՈՐ ՊԱՏԵՐԱԶՄ ԵՆ ՊԱՏՐԱՍՈՒՄ
ԽՈՐՅՈՒԹԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Պ Ե Տ Հ Շ Պ Ա Տ
ՅԵՐԵՎԱՆ 1951

27 SEP 2006

Ն. ԲԵՐԿՈՎԻՉՅԱՆԻ

15 JAN 2010

327

F-71

Ար

ԿԱՊԻՏԱԼԻՍՆԵՐԸ
ՆՈՐ ՊԱՏԵՐԱԳՄ ԵՆ ՊԱՏՐԱՍՈՒՄ
ԽՈՐՅՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԴԵՄ

1789



15628 - 57

1931

ՅԵՐԵՎԱՆ

05 MAR 2013

18110

ԱՌԱՋԻՆԸ ԵԵԶԱՍՏԱՆՆ ՈՒ ՌՈՒՄԻՆԻԱՆ ԵՆ
ՀԱՐՁԱԿՎԵԼՈՒ Խ. ՄԻՈՒԹՅԱՆ ՎՐԱ

«Արդյունաբերական» կուսակցության գործը միանգամ ևս ամբողջ աշխարհին ցույց տվեց Խորհ. Միության դեմ պատրաստվող արշավանքի գլխավոր թելերը: Այդ արշավանքում չիմնական գերը պիտի կատարեն լեհաստանը և Ռումինիան, իսկ նախազարաստման զեկավարությունը՝ Ֆրանսիան՝ Խորհրդ: Միության ամենալոիսերիմ թշնամին:

Լեհաստանը յերազում և զրավել Խորհրդային Ռւկրայնան: Լեհաստանի անտեսությունն անընդհատ գըտնվում և քայլայժման վիճակում: Նա վոչ մի կերպ չի կարողանում կարգավորել իր արդյունաբերության աշխատանքը և ապահովել գյուղատնտեսական արտադրանքի սպառումը: Այս բարորով մեկտեղ՝ Լեհաստանը հոկայական միջոցներ և ծախսում սպառազինության վրա: Նրա պատերազմական ծախսերը յերկը ամբողջ պետական ծախսերի մոտ 40 տոկոսն են կազմում: Լեհական կառավարությունը միջոցների սակավության պատճառով՝ կրծատեց ժողովրդական կրթության ծախսերը, բայց նա իր պատերազմական ծախսերը վոչ միայն չկըր-ձատեց, այլև ավելացրեց:

Թշնամիները լոյրջ հույսեր են դնում Ռումինիայի վրա: Այս յերկիրը, վոր կապիտալիստական մեծ պետություններից ոժանդակություն ե ստանում, մեղանից իւլել և Բեռնաբարիան: Հիմա նա նոր զրավումներ և

ԹԵՇՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿ. № 1759
ԳԼՈՎԼԻՏ 6678(Բ)
ՊԱՏՎԵՐ 4001
ՏԵՐԱԺ 7000

տենչում : Խ . Միության դեմ պատերազմ ծագած դեպքում՝ ոռումինական զորքերը պատրաստվում են հարձակվել Ռդեսայի, Նեկողայեվի և այլ անդերի վրա :

Բացի Լեհաստանը և Ռումինիան, Խ . Միության դեմ կատարվելիք արշավանքին պիտի մասնակցեն նաև ուրիշ պետություններ, վորոնք մեզ սահմանակից են արևելաքից, ինչպես Ֆինլանդիան, Եստոնիան, Լատվիան, նույնպես և Զեխո-Ալովակիան, վորն ունի ռազմական ուժեղ գործարաններ : Վերջապես մոտ ժամանակներս սպիտակ գվարդիական գեներալ Միլերը պարծենում եր, վոր ինքն իր արամագամնում շարադարձության տակ 100 հազարանոց բանակ ունի : Գուցե թե նա ստում է, բայց համենայն դեպս փաստ է, վոր սպիտակ գվարդիականներն արտօսահմանում շարադարձում են զինվորական ուսում առնել և պահում են զինվորական կազմակերպություն : Այս բանդիանները միայն սպասում են ունի մոմենտին, վարպեսզի ոտարյերկրյա զինվորների ուղնությամբ մտնեն Խ . Միություն և դատ ու դատաստան տեսնեն իրենց Խ . Միությունից գուրս վոնդող խորհրդային բանվորների և գյուղացիների հետ :

ԶՐՊԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄՊԱՆԻԱԾ . Խ . ՄԻՈՒԹՅԱՆ
ՀԱՍՑԵՑԻՆ

Կապիտալիստական պետությունները պատրաստում են հարձակվել Խ . Միության վրա : Վորպեսզի իրենց յերկրների բանվորների և գյուղացիների դիմադրությունը թուլացնեն, կապիտալիստներն աշխատում են վորքան հնարավոր ե լայն ու ամենաանհաշտ առելություն սերմանել դեպի Խ . Միություն :

Այսպես որինակ, բուրժուական թերթերը բանվորներին ներշնչում են, թե Խ . Միությունն է մեղավոր :

Վոր գործադուրիները չեն կարողանում աշխատանք ճամբել, իրեմ թե այն պատճառով, վոր Խ . Միությունը իր ապրանքներն արտասահմանում անհամեմատ եժան է վաճառում և այլպիսով, կապիտալիստական յերկրների ապրանքների սպառումն անհնարին և դարձնում : Միենույն բանն առջում է նաև գյուղացիներին, վորոնք բոլոր այն յերկրներում, ուր բուրժուազիան է կառավարում, տանջվում են հենց այն բանով, վոր իրենց մթերքների համար սպառում չեն գտնում :

Հուկմի պալլը կոչ ուղղեց բոլոր հավատացյալ կաթոլիկներին, վորով նա նրանց համոզում և Խորհրդային իշխանության դեմ կովկու անհրաժեշտության մասին :

Ամենից ավելի զարդելի դեր կատարում են Յերկրորդ ինտերնացիոնալի¹⁾ մենշևիկները : Նրանք շարունակում են իրենց ստոր աշխատանքը սլորետարիստի շարքերում—այն դասակարգի, վորին առանձնապես դժվար է հանել Խորհրդ . Միության դեմ : Ռդտագործելով զբարդության և ստի բոլոր միջոցները, այդ պարոններն աշխատում են բանվոր դասակարգին ջլատել, սերմանել նրա միջ անվասահության և ատելության սերմեր գեափի բանվորների և գյուղացիների յերկիրը :

Այսպես որեցոր բուրժուազիան կապիտալիստական յերկրների ազգաբնակությունը պատերազմի յե նախապատրաստում Խորհրդային Միության դեմ :

¹⁾ Յերկրորդ ինտերնացիոնալը, այսպես ասած սոցիալ-դեմոկրատական (մենշևիկական) կուսակցությունների միությունն է : Այս կուսակցություններն իրենց անվանում են բանվորական և սոցիալիստական, իսկ գործնականում նրանք հանդիսանում են բուրժուազիայի ամենահավատարիմ ծառաները :

Ի՞նչն ե պատճառը, վոր կապիտալիստական յերկըր-
ներն այդքան սուր ատելություն են տածում դեպի և .
Միությունը:

Միքանի տարի սրանից առաջ կապիտալիստները
կարող եին իրենց բանվարներին ու գյուղացիներին
հերթներ պատմել այն մասին, վոր իրենց իբրև թի-
հաջողվել ե ընդմիշտ հաղթահարել տնտեսական քայ-
քայումը, մինչդեռ և. Միության մեջ տնտեսական
քայքայումը հետզետե խորանում է: Այժմ դրությունը
հիմնուին փոխվել է: Աշխարհի բոլոր կապիտալիստա-
կան յերկրներն ամենածանր կրիզիս են ապրում: Հայը,
բամբակը, ածուխը, յերկաթը, հյուսվածքները, մեքե-
նաները—այս բոլորն արտադրվում են չափազանց մեծ
քանակությամբ, այս բոլորը չգիտեն ինչ անել, վորով-
հետեւ կապիտալիստական յերկրներում, միլիոնավոր
աշխատավորները և ավելի ևս գործազուրկները հնա-
րավորություն չունին իրենց համար ամենահարածեցա-
րաները ձեռք բերել:

Այդ միենույն ժամանակ և. Միության բանվոր-
ներն ու գյուղացիները, կոմկուսի (բ) առաջնորդու-
թյամբ, մեկը մյուսի յետեկից հաղթահարում են տնտե-
սական շինարարության ճանապարհին ընկած ամենա-
գիշարին արգելառիթները: Վերջին տարի ու կիավա-
ընթացքում մենք գործի գցեցինք մի շարք հսկա ձեռ-
նարկություններ, վորոնց կահավորման համար ուրիշ
էշխանության օրով տասնյակ տարիներ կպահանջվե-
րին: Բավական և հիշել այնպիսի հսկաներ, ինչպես
Քուրքեստան—Միքիր յերկաթուղագիծը, Ստալինգրա-

դի տրակտորի գործարանը, Ռոստովի գյուղատնտեսա-
կան մեքենաշինարարության գործարանը:

Ինքնին հասկանալի յէ, վոր մեր հաջողությունները
մենք հեշտությամբ ձեռք չենք բերում: Քիչ չեն մեր
ունեցած լուրջ դժվարությունները: Կապիտալիստները
մեր դժվարություններն ամեն կերպ ուռամացնում են ու
մեծացնում: Բայց և այնպես, նրանք չեն կարող Խոր-
հրդային Միության դրության և Արևմուտքի մեջ յեղած
հիմնական տարրերությունները չունենել: Ներկայումս
կապիտալիստական յերկրներում բանվորները ծանր
ժամանակ են ապրում և վոչ մի լավ բան չեն տեսնում
իրենց համար նույնպես ապագայում: և. Միության
մեջ ճիշտ հակառակ գրությունն է: և. Միության բան-
վոր գասակարդը, առաջապահ գյուղացիությունը, հը-
րաշալի կերպով իրենց հաշիվ են տալիս այն մասին,
վոր իրենց լարված աշխատանքը սոցիալիստական շի-
նարարության հնդամյակի մեծ ծրագիրն իրագործելու
համար, մոտավոր ապագայում և. Միության բոլոր
աշխատավորներին կտա հսկայական բարորություն:

Ահա թե ինչու բուրժուական քաղաքագետները գա-
լիս են այն յեղակացության, վոր անհրաժեշտ և վոր-
քան կարելի յէ շուտ ուղմական հարձակում պատրաս-
տել և. Միության դիմ:

Եեթի այդ չարի մոտակա մեկ-յերկու տարրում,
դասում են նրանք, ապա ուրեմն հետո, յերբ հնդամյա-
կը կերպործվի, գուցե թե ուշ լինի:

Ինչո՞ւ ՄԵԶ ԱՄԵՆԻՑ ՇԱՏ ՖՐԱՆՍԱԿԱՆ ԿՈՊԻՏԱ-
ԼԻՍՏԱՆԵՐՆ Են ԱՏՈՒՄ

Ֆրանսիան յերկար տարիների ընթացքում գլխա-
վորում է հակախորհրդային արշավանքը: Ֆրանսական
կապիտալիստներն անմիջական կերպով իրենց ձեռքն

Են առնում պատերազմի նախապատրաստության դեկտ-
վարությունը։ Նորերս միայն թերթերում հրապարակ-
վեց, վոր Խ. Միտթյան դեմ նոր պատերազմ ծագելու
դեպքում՝ լեհ-ռումինական ղորաբանակների գլխավոր
հրամանատար պիտի նշանակվի Փրանսական գեներալ
Քուրոն։ Ֆրանսական բանակի դեկտվար նշանակված
է գեներալ Վեյզան, նա, վորը դեկտարում եր լեհա-
կան բանակը, յերբ մենք հարձակվում ենքնք Վարչա-
վայի վրա։

Ինչո՞ւ յէ հասոկսապես ֆրանսիան Խ. Միության դեմ
պատերազմ նախապատրաստելու գործում այդպիսի
ակտիվություն ցուցաբերում։

Ֆրանսական բանկիրներն ու արդյունաբերողներն
առանձնառես սերտ կապերով եյին կապված Ռուսաս-
տանի ինքնակալական-կալվածատիրական իրավակար-
դի հետ։ քանի-քանի հարյուրավոր միլիոններով վարկ
եյին տալիս նրանք ցարական կառավարությանը։ Ռու-
սական ինքնակալությանը ցույց տված ոգնության հա-
մար, Փրանսական կոստալիստները լավ վարձա-
տրություն եյին ստանում։ Ցարական Ռուսաստանում
տնտեսության կարևորագույն ճյուղերը, ինչպես մե-
տաղածուլումը, քարածուիի շահագործումը, բանկա-
յին դործը, հացի արտահանությունը, մասամբ և յեր-
կաթուղարծերը—այս բոլորն առաջերածես գտնվում
եյին ֆրանսական խոչոր դրամատերերի ազդեցության
տակ։

Բացի այդ, ցարական Ռուսաստանի ամբողջ բանա-
կը նույնպես գտնվում է Փրանսական կապիտալիստ-
ների տրամադրության տակ։ Պատերազմի ժամանակ
ոռուսական հրամանատարությունը գործողությունները

կատարում եր ֆրանսիայի թերթերությամբ։ Ֆրան-
սիական գեներալների առաջին պահանջի համաձայն,
նա, առանց մտածելու, մահվան գիրկն եր նետում հա-
րյուր հազարավոր զինվորների։ Հենց վերցնենք պատե-
րազմի սկզբում Արևելյան Պրուսիայում ոռուսական զոր-
քերի կրած ծանր պարտությունը։ Այդ գեաքը զգալի
չափով այն բանից առաջացավ, վոր ֆրանսիայի պա-
հանջով ոռուսները հարձակման անցան, վորի համար ա-
մենեին պատրաստ չեյին։

Այսպիսի վաստեր հաճախակի տեղի ունեցան պա-
տերազմի ժամանակ և հետագայում։

Դրությունը չփոխվեց նաև Փետրվարյան հեղափո-
խությունից հետո, յերբ միապետությունը տապալվեց։
1917 թվի հունիսի 1-ին Կերենսոկու դեկտարությամբ
սկսված հարձակումը, յերբ ոռուսական զորքերն ամե-
նազաժան պարտություն կրեցին, ցույց տվեց, վոր հա-
մաձայնողական կառավարությունն ել, Փրանսական
կալիստալիստների շահերի համար զոհաբերում եր մի-
լիոնակից բանվորների ու գյուղացիների կյանք։

Միայն բայց և կիների կողմից դեկտարավող Խոր-
հըրդային իշխանությունը, իր առաջնարու հենց առա-
ջին որից հաստատապես հայտարարեց, վոր Ռուսաս-
տանի բանվորներն ու գյուղացիներն այլևս բանկիրների
համար թնդանոթի միտ չեն լինի։ Խորհրդային իշխա-
նությունը հայտարարեց, վոր բանկիրների շահի համար
մղվող պատերազմը դադարեցվում է, վոր ցարական
պարտքերը չել վճարելու, վոր գործարանները, Փարբե-
կանները, հանքերը, յերկաթուղիները դառնում են ժա-
դովրդի սեփականություն։ Ահա թե ինչու Փրանսական
իշխանությունը, վոր հանդիսանում է Փրանսական

կապիտալի գործակալը, այդպիսի վայրենի վոխակա-
լություն և տածում գեղի և . Միությունը :

ՀԱՄԱՉԱՆՈՒԹՅՈՒՆ ՄԵՐ ԹՇՆԱՄԻՆԵՐԻ ՄԵԶ ՅԵՎ
ՆՐԱՆՑ ՓՈՐՁԵՐԸ ՄԻՄՅԱՆՑ ՀԵՏ
ՀԱՄԱՉԱՆՈՒԹՅՈՒՆ ԿԵՐԵԼՈՒ

Այսորվա Ֆրանսիան Խ. Միության ամենավախերիմ
թշնամին ե, բայց նա մեր միակ թշնամին չե: Վոր
բուրժուական յերկիրն ել վոր վերջնելու լինենք—ամեն
տեղ ել ահռելի վոխ և ատելություն են տածում գեղի
և . Միությունը: Յեթե մեր բոլոր թշնամիները կարո-
ղանալին միանալ, նրանք ահռելի ուժ կկազմեյին: Բայց
հենց բանն ել նրանումն ե, վոր դրանք բուրժուական
յերկիրներ են, —նրանք մեկը մյուսի հետ հակածար-
տում են, ձգտում են մեկը մյուսից ավար խլել, և խորթ
աչքով են մտիկ տալիս մեկը մյուսին: Իրար հետ միա-
նալը նրանց համար շատ դժվար է:

Ահա ամենից ավելի ցայտուն որինակ: Խ. Միու-
թյան դեմ պատերազմ ծագելու դեպքում առաջին հըր-
ձիքը պիտի լինի Լեհաստանը: Սակայն Լեհաստանի թի-
կունքում գտնվում է Գերմանիան, վորից Լեհաստանը
կարեոր ըրջաններ ե խլել: Լեհաստանը վախենում է,
վոր պատերազմի դեպքում Գերմանիան կտահանջի այդ
բոնադրաված ըրջանները յետ վերադարձնել: Հետեւ
պես, նախքան Խ. Միության դեմ պատերազմ սկսելը,
Լեհաստանին անհրաժեշտ է համաձայնվել Գերմանիայի
հետ: Ճիշտ այդպես են նաև գերմանո-ֆրանսական հա-
րաբերությունները: Դերմանիայի դեկավար ըրջանները
չափազանց զայրացած են ֆրանսիայի դեմ, վորը հո-
մաշխարհային պատերազմում Գերմանիային հաղթեց և
նրան ամբողջովին թալանեց: Յեթե գերմանական բուր-

ժուաղիան ուժ ունենար, նա Ֆրանսիային վողջ-վողջ
կուլ կտար: Բայց բանն ել հենց նրանումն ե, վոր նա
այդ ուժը չունի: Նա այնպիսի գիծ ել տանում ե, վոր
աստիճանաբար ուժ հավաքի, խորամանկորեն համա-
ձայնություն կնքելով մեկ այս, մեկ այն պեսության
հետ: Սակայն գերմանական բուրժուազիան պատրաստ
ե Ֆրանսիային նույնիսկ ողնելու և. Միության դեմ,
բայց այն պայմանով, յեթե իրեն լավ վճարեն: Այս վը
ձարման համար ել աճուրդ և աեղի ունենում:

Անզլիմն ե Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նա-
հանգներն ել սիրով կոժանզակեյին և. Միության դեմ
մղվելիք պատերազմին, բայց նրանք վախենում են գոր-
ծը տանուլ տան: Յեթե այդ պատերազմում ասենք հաղո-
թի Ֆրանսիան, այդ դեպքում նա այնքան կուժեղանու,
վոր կղանա չափազանց վտանգավոր մրցակից: Իսկ
յեթե հաղթի և. Միությունը, աղա ամբողջ աշխար-
հում կարող ե սոցիալիստական հեղափոխություն
բռնկվել:

Հակամարտություններ կան նաև կապիտալիստա-
կան առանձին իմբրավորումների միջև ամեն մի յերկրի
ներսում: Կապիտալիստական իմբրավորումներից վո-
մանք ցանկանում են մեր գեմ մղվելիք պատերազմն ա-
րագացնել: Մյուսները, պատրաստելով մեր գեմ պա-
տերազմ, միաժամանակ չեն հրաժարվում և. Միու-
թյան հետ առայժմ առեւտուր անելուց, չեն հրաժար-
վում այն շահերից ու ողուտներից, վոր խոստանում է
նրանց այդ առեւտուրը:

Անկարելի բան չի այն, վոր նրանք միմյանց հետ
կհամաժայնվեն: Կասկած չկա, վոր բոլոր իմպերիալիս-
տական պետությունները կարող են ժամանակավորա-

պես միմյանց հետ համաձայնվել, վորոշեզի կ. Միության դեմ մզվելիք պատերազմը հնարավոր դառնա:

ՄԵՐ ԹՇՆԱՄԻՒՆԵՐԸ ՅԵՐԿՐԻ ՆԵՐՍՈՒՄ ՅԵՎ ՄԵՐ
ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐԸ ԱՐՏԱՍՍՀՄԱՆՈՒՄ

Խոր. Միության դեմ մզվող պայքարում, կապիտալիստները միմյանց իրենց սեփական ուժերի վրա չեն հենվում: Նրանց բոլոր հաջիվներում մեծ տեղ են գրավում ի. Միության մեջ գտնվող անաշխատունակ և շահագործող դասակարգերի մնացորդները: Կուլակները, վորոնց համատարած կոլեկտիվացումը մահացու հարցած և հասցնում, սպեկուլյանները, վորոնք կյանք չունեն Խորհրդային իշխանության որով, զանազան կրոնների հոգևորականները, վորոնք ատելությամբ ու վոխակալությամբ են նայում մասսաների դիտակցության, հին մասնագետ-ինժեներները, վորոնք կատված են իրենց հին տերերին ու հին կարգ ու կանոններին, մենքիները, վորոնք ամբողջ հոգով ատում են պրուետարիատի սոցիալիստական չինարարությունը—սրբանք են այն ատրեւերը, վորոնց վրա հենվում և մեր դեմ պատերազմ պատրաստող համաշխարհային կապիտալը: Այս կափքը, վոր մզվում և մեր դեմ, յերեք չեն մանում զանազան յերկրների իրար դեմ ունեցած սովորական կովին: Մենք արգեն տեսանք, վոր կ. Միության դեմ կապիտալիստների ունեցած ատելության գլուխավոր պատճառն այն է, վոր մեղանում իշխանությունը գտնվում և պրոլետարիատի ձևոքին: Պայքար իորի. Միության դեմ—այդ պայքար և հաղթականին առաջ լնիքացող, հակայական հաղթանակներ տանող սոցիալիզմի դեմ: Յեզ յեթե բուրժուազիան մեր յերկրում

դաշնակիցներ ունի, ապա և մյուս կողմից վոչ պակաս լուրջ ուժ են ներկայացնում նաև կասիտալիստական յերկրներում գտնվող մեր դաշնակիցները:

Ո՞վքեր են նրանք, այդ դաշնակիցները: Դրանք—այն բանվորներն են, վորոնք հեծում են կապիտալիստական շահագործման լծի տակ, դրանք կապիտալիզմի ձևոքով ընչաղուրկ դարձած քայքայված գյուղացիներն են: Դրանք—գաղութիների և կիսադաղութիների հարյուրավոր միլիոն աշխատավորներն են, վորոնք ձգտում են կապիտալիստական յերկրների լուծը դեն շպրտել:

Քաղաքացիական պատերազմի ժամանակ, մենք հաճախակի տեսանք այդ դաշնակիցների լուրջ ոգնությունը, ամենից առաջ և ամենից շատ իհարկե պրոլետարիատի կողմից: Մի՛թե փաստ չե այն, վոր 1919 թ. գարնանը Փրանսական Սև ծովյան նավատարբեն ապրուածիքը, չցանկանալով կովել բայլեկիների դեմ և վոր Փրանսական հրամանատարությունը ստիպված յեղավ բոլոր նավերը Սև ծովից տանել ֆրանսիա: Մի՛թե փաստ չե և այն, վոր խորհրդային-լեհական պատերազմի ժամանակ գերմանական, չեխական և ավստրիական յերկաթուղարյիները վճռականորեն հրաժարվեցին բառնալ և տեղափոխել այն ռազմանյութերն ու ռազմամթերքները, վորոնք հատկացված եյին կ. Միության դեմ տարգող պատերազմին: Մի՛թե փաստ չե այն, վոր նույն խորհրդային-լեհական պատերազմի ժամանակ անգլիական պրոլետարիատը վճռականորեն հայտնեց կառավարության իր դիտավորությունն ընդհատելու ռազմական նյութերի արտադրությունն ու քեռնումը, յեթե անգլիական կառավարությունը լեհաստանին ոգնի: Այս բոլորն անվիճելի փաստեր են: Բայց չե վոր այն ժամանակ արևմտյան յերկրներում

գեռես այնպիսի կոմունիստական կուսակցություններ չլային, ինչպիսիք կան ներկայումս:

Յեվ յիթե ամբողջ աշխարհի կապիտալիստները հեմա, մեր վիթխարի հաջողությունների ժամանակ, կատաղորեն մեր դեմ պատերազմի յեն պատրաստվում, առաջ մենք պանիկայի չենք յենթարկվում: Մենք այսոր վոչ միայն ուժեղ տեխնիկայով սպառազինված կարմիր բանակ ունենք, այլև մենք լի ու լի հիմք ունենք հենվել մեր դաշնակիցների ոժանդակության վրա, — ամբողջ աշխարհի պրոլետարիատի վրա — մեր թշնամիների թիկունքում:


Մեր գործն ե—բայլշեիկյան տեմպերով իրագործել
արդյունաբերության սոցիալստական ծավալման, և .
Միության գյուղատնտեսության սոցիալստական վե-
րակառուցման Հնդկամյակը : Հնդկամյակի իրագործութը
պաշտպանության տեսակետից մեզ համար ավելի պա-
կաս նշանակություն չունի, քան Կարմիր բանակի ամ-
րապնդումը :

Սոցիալիստական արդյունաբերության աշխատավորների կողմէում ընկեր Մտալինն իր ճառում ասաց : —

«ՄԵՆՔ ՀԱՂԹԵցինք վոչ միայն ի . Միության բան-
վոր դաստկարգի ջանքերով , այլ նաև շնորհիվ համաշ-
խարհային բանվոր դաստկարգի ոժանդակության : Ա-
ռանց այդ աջակցության մեղ վաղուց զգզգած կլինելին :
Առում են , վոր մեր յերկիրը հանդիսանում է բոլոր յեր-
կրների պրոլետարիատի հարվածային բրիգադը : Այդ-
ւայ և ասված : Բայց այդ մեղ վրա լուրջ պարտավորու-
թյուններ ե ղնում : Ինչո՞ւ համար ե միշաղգային ոլոր-
ւետարիատը մեղ ողնում , ինչով մենք արժանացանք այդ
ողնության : Երանով , վոր մենք առաջինը յեղանք , վոր

Հովի բանվեցինք կամբուտալիզմի հետ, մենք առաջինը հիմնեցինք բանվորական իշխանություն, մենք առաջինը սկսեցինք սոցիալիզմ կառուցել: Նրանով, վոր մենք կատարում ենք մի գործ, վորը հաջողության դեպքում հենցաշրջի ամբողջ աշխարհը և կաղամագրի բովանդակ բանվոր դասակարգին: Իսկ ի՞նչ է պահանջվում հաջողության համար: Մեր հետամնացության լիկվիդացիան, շինարարության բարձր, բայլչեկիլյան տեմպերի ուժգին դարդացումը: Մենք պետք ե այնպես առաջ շարժվենք, վոր ամբողջ աշխարհի բանվոր դասակարգը, նայելով մեզ, կարողանա ասել.—ահա նա, իմ առաջարկահ ջոկատը, ահա նա, իմ հարվածային բրեդայը, ահա նա, իմ բանվորական իշխանությունը, ահա նա, իմ հայրենիքը—նոքա կատարում են իրենց գործը, մեր գործը լավ—ողնենք նրան ընդդեմ կապիտալիստների և ծավալենք համաշխարհային հեղափոխության դործը»:

Ըսկեր Ստալինի այս սքանչելի խոսքերը պետք են մենք ամենքս հիշենք՝ առաջարկելի իրազործման համար, ամբողջ աշխարհութանցիվ միացմանի հաղթանակի համար տարբերվող պարունակությունը:



«Ազգային գրադարան



NL0196127

459

ԳԻՐԸ 5 ԿՈՊ .(1/2 մ.)



Н. БЛИСКАВИЦКИЙ

КАПИТАЛИСТЫ ГОТОВЯТ НОВУЮ ВОЙ-
НУ ПРОТИВ СОВЕТСКОГО СОЮЗА

Госиздат ССР Армении
Эривань—1931